ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂԻՆ՝ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՆԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2-ՐԴ ԿԱՐԳԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԼՈՒՐՋ/ՎԱՅՐԱԳ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ, ՄԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ, ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ) [ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍ 12305.87]

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Դիմորդ մատակարարողի անունը՝ _____
Ստացողի անունը՝ _____
Ստացողի գործի համարը՝ _____
IHSS գրասենյակի հասցեն՝ _____
_____
IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ստացողին

Քրեական հանցանքի համար դատապարտման պատճառով, այն անձը, որին դուք ընտրել եք աշխատանքի ընդունել ձեզ IHSS ծառայություններ տրամադրելու համար՝ _____, զրկվել է IHSS ծրագրից վճարումներ ստանալու իրավասությունից՝ ձեզ կամ որևէ այլ անձի ծառայություններ տրամադրելու համար:

Որպես մատակարարողի անդամագրման գործընթացի մաս՝ այս անձը մատնահետքեր է հանձնել Կալիֆորնիայի Արդարադատության բաժնին՝ քրեական կենսագրությունը ստուգելու համար: Կենսագրության ստուգումը կամ դատարանի փաստաթուղթը ցույց տվեցին, որ նա դատապարտված է եղել այնպիսի հանցագործության(ների) համար, որը նրան զրկում է IHSS մատակարարող լինելու ու ծառայություններ տրամադրելու համար IHSS ծրագրից վճարումներ ստանալու իրավասությունից՝ հիմնվելով Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի մաս 12305.87-ի վրա: Այս հանցագործություն(ներ)ը, որը/որոնք որակազրկել է/են նրան, թվակված է/են ներքևում՝

_____
_____
_____
_____
_____
_____

Դիմորդ մատակարարողի դատապարման մասին այս տեղեկությունը շատ զգայուն բնույթի է և պետք է գաղտնի պահնի: Ձեզ օրենքով արգելվում է կիսել այս տեղեկության որևէ մաս մեկ այլ անձի կամ հաստատության հետ:

Չնայած հանցանքի համար այս անձի դատապարտմանը, դուք կարող եք ներկայացնել ստորագրված հրաժարում, որն այս անձին թույլ կտա աշխատել որպես ձեր IHSS մատակարարող: Եթե համաձայնվեք հրաժարմանը, դուք պատասխանատվություն եք ստանձնում այս որոշման և հնարավոր գործողությունների վտանգի համար, որոնք կարող են առաջանալ այս որոշման հետևանքով: Դուք պետք է լրացնեք, ամսագրեք և ստորագրեք SOC 862 ձևը՝ «IHSS Ստացողի հայցը մատակարարողի հրաժարման համար», և ներկայացնեք այն վարչաշրջանի/հանրային իշխանության/շահույթ չհետապնդող կոնսորցիումի IHSS գրասենյակ:

Հրաժարումը թույլ կտա այս անձին ծառայել որպես IHSS մատակարարող միայն ձեզ համար ու միայն այն վարչաշրջանում, որտեղ ներկայացվել է հրաժարումը, և նա վճարում կստանա IHSS ծրագրից ձեզ ծառայություններ տրամադրելու համար: Այս հրաժարումը կիրառելի կլինի միայն 1-ին էջում նշված որակազրկող հանցագործություններին: Եթե մատակարարողը դատապարտվում է որևէ հաջորդող որակազրկող հանցագործության(ների) համար, ապա պետք է լրացվի մեկ այլ SOC 862 ձև և ներկայացվի այդ հաջորդող որակազրկող հանցագործության համար:

Եթե այս անձը ցանկանում է ծառայություններ տրամադրել բազմաթիվ ստացողներին, ապա յուրաքանչյուր ստացող պետք է ներկայացնի առանձին ստորագված SOC 862 ձև, կամ այս անձը պետք է ընդհանուր բացառություն խնդրի՝ լրացնելով SOC 863 ձևը՝ «IHSS Դիմորդ մատակարարողի ընդհանուր բացառության հայց», և պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացնի այն Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժին:

Առանց այս հրաժարման կամ ընդհանուր բացառման, դուք պետք է մեկ այլ անձ ընտրեք ծառայություններ տրամադրելու համար: Հակառակ դեպքում, դուք պատասխանատու կլինեք տրամադրած ծառայությունների համար նրան վճարել ձեր սեփական միջոցներից:

Խնդրում ենք չդիմել վարչաշրջան/հանրային իշխանություն/շահույթ չհետապնդող կոնսորցիում կամ Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժին (California Department of Public Services, CDSS) 1-ին էջում նշված հանցագործությունների կամ դատապարտումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար: Համաձայն Քրեական օրենսգրքի մասեր 11105 ու 13300՝ այս գործակալություններին արգելվում է այս ծանուցման մեջ նշվածից ավելի որևէ մանրամասներ հաղորդել այս հանցագործությունների կամ դատապարտումների վերաբերյալ:

Եթե դուք օգնության կարիք ունեք մեկ այլ մատակարարող գտնելու հարցում, զանգահարեք IHSS գրասենյակ նախորդ էջի վերևում նշված հեռախոսահամարով: